

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԻԵԿ-Ի ՄԻՋԱ ԿԱՆ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿԱՐԾԻՔ

19.05.2016 09:43



Ի տարբերություն բարոյական վնասի վերաբերյալ Հայաստանի օրենսդրությամբ ամրագրված կարգավորումների՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ու ՄԻԵԿ ձևավորած պրակտիկայի համաձայն, բարոյական վնասը չունի հատուցման գումարի վերին շեմ: Սա այն տարբերությունն է, որն առաջին իսկ հայացքից նկատելի է: Այս մասին «Փաստինֆո»-ի լրագրողի հետ գրուցում նշեց փաստաբան Հայկ Ալումյանը՝ հավելելով, որ դրանից ելնելով՝ եվրոպական կոնվենցիան Հայաստանի օրենսդրությունից շատ ավելի ճկուն է:

«Մերոնք փորձել են Կոնվենցիային շատ համապատասխանեցնել մեր օրենսդրությունը, բայց, իհարկե, ամբողջությամբ չեն կարողացել անել», - նշեց Հ.Ալումյանը:

Ըստ փաստաբանի, եվրոպական կոնվենցիան նախատեսում է, որ ՄԻԵԿ-ով ամրագրված ցանկացած իրավունքի կամ ազատության խախտման դեպքում կարող է տեղի ունենալ բարոյական վնասի դրամական փոխհատուցում: «Մեր օրենսդրությունը մասնավորեցրել է դեպքերը, բայց Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները չի նախատեսել: Այսինքն՝ կան կոնվենցիոն իրավունքներ կամ ազատություններ, որոնց խախտման դեպքում մեր օրենսդրությամբ չի նախատեսվել դրամական փոխհատուցում: Սա արդեն Կոնվենցիայի հետ անհամապատասխանություն է», - ասաց նա:

Օրինակ՝ Կոնվենցիայի 4-րդ հոդվածով՝ Ստրկության ու հարկադիր աշխատանքի արգելում, ամրագրված իրավունքի խախտման դեպքում եվրոպական կոնվենցիան նախատեսում է բարոյական վնասի դրամական փոխհատուցում, մինչդեռ Հայաստանի օրենսդրությունում նման բան չկա:

Ի դեպ, արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում Կոնվենցիայով անպայման չէ, որ բարոյական վնասը դրամական փոխհատուցում ստանա. այն դեպքերում, եթե հնարավոր է վերականգնել նախքան խախտումն եղած վիճակը, դրամական փոխհատուցում կարող է և տեղի չունենալ: «Մեր օրենսդրության մեջ իմպերատիվ գրել են, որ արդար դատաքննության իրավունքը ենթակա է հատուցման, երանգները հաշվի չեն առել: Մի դեպքում իհարկե, ենթակա է հատուցման, մյուս դեպքում կարող է չհատուցվել, այստեղ կացնային մոտեցում է», - ընդգծեց Հայկ Ալումյանը:

Կոնվենցիայի 7-րդ հոդվածը՝ Պատիժ բացառապես օրենքի հիման վրա, նախատեսում է, որ ոչ ոք չի կարող ենթարկվել մի պատժի, որը հանցագործությունը կատարելու ժամանակ գոյություն չի ունեցել: Եթե այս իրավունքը խախտվի, Կոնվենցիան նախատեսում է դրամական փոխհատուցում, Հայաստանի օրենսդրությունը՝ ոչ: «Գրել են մի օրենք, որ շատ շուտով նորից է փոխվելու, հետո նորից ու նորից է փոխվելու: Ինչպես միշտ, միանգամյա օգտագործման օրենքներ են գրում և առաջին օգտագործումից հետո պարզվում է, որ օրենքը չի աշխատում: Շատ վատ վիճակ է, ի դեպ, նաև այս տեսանկյունից», - նշեց Հայկ Ալումյանը:

Հեղինակ՝ ՓԱՍՏԻՆՖՈ

Լուսանկարը՝ Armenpress-ի